## ՀՀ ԱԳՆ արտաքին մրցույթի թեստի հարցաշար

1. Հայաստանի Հանրապետությունում ու՞մ է պատկանում իշխանությունը:
2. Հայաստանի Հանրապետությունում ժողովուրդն ինչպե՞ս է իրականացնում իր իշխանությունը:
3. Հայաստանի Հանրապետությունում ինչպե՞ս է իրականացվում պետական իշխանությունը:
4. Ինչպե՞ս են անցկացվում Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները:
5. Ի՞նչ իրավական ակտով է ստեղծվում, վերակազմակերպվում Նախարարությունը:
6. Ի՞նչ իրավական ակտով է դադարեցվում Նախարարության գործունեությունը:
7. Ո՞վ (ովքե՞ր) են իրականացնում Նախարարության կառավարումը:
8. Ի՞նչ խմբերի են դասակարգվում պետական պաշտոնները:
9. Կառավարության անդամը ե՞րբ է ստանձնում իր լիազորությունները:
10. Ո՞վ է հրավիրում կառավարության նիստերը:
11. Ի՞նչ իրավական ակտով է սահմանվում նախարարությունների ցանկը:
12. Ե՞րբ է ընդունվել «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքը:
13. Ե՞րբ է ընդունվել «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը:
14. Ի՞նչ է էկզեկվատուրան:
15. Ի՞նչ է ագրեմանը:
16. Ո՞վ է դուայենը:
17. Ո՞վ է «դիվանագիտական գործակալը» ըստ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961թ. Վիեննայի կոնվենցիայի:
18. Ո՞ր դեպքում է ընդունող պետությունը պարտավոր ուղարկող պետությանը հայտնել ագրեմանի մերժման պատճառների մասին:
19. Ո՞ր դեպքում երկու կամ մի քանի պետություններ միեւնույն անձին կարող են հավատարմագրել որպես ներկայացուցչության ղեկավար այլ պետությունում:
20. Ո՞ր դեպքում են դիվանագիտական ներկայացուցչության արխիվները եւ փաստաթղթերը կորցնում իրենց անձեռնմխելիությունը:
21. Ո՞րտեղ եւ ե՞րբ է կնքվել Հավաքական Անվտանգության Պայմանագիրը:
22. Ե՞րբ է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունել Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման համաձայնագիրը:
23. Ե՞րբ և որտե՞ղ է Հայաստանը միացել ԵՍԶՈՒ-ին:
24. Ո՞ր թվականին և որտեղ է ստորագրվել «ՀՀ և ՌԴ միջև XXI դարը ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» Հռչակագիրը:
25. Ո՞ր փաստաթղթում իրավական սահմանում ստացավ «ցեղասպանություն» տերմինը:
26. Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակում և ո՞վ է հետ կանչում:
27. Օտարերկրյա պետությունների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հավատարմագրերն ու հետկանչագրերն ո՞վ է ընդունում:
28. Ո՞ր մարմինն է հաստատման ենթակա միջազգային պայմանագիրը ներկայացնում Հանրապետության նախագահին:

29. ՀՀ միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթներն ո՞վ է իրականացնում:
30. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դիվանագիտական աստիճանները ո՞վ է շնորհում:
31. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության բարձրագույն դիվանագիտական աստիճանները:
32. Ո՞վ է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը շնորհում և դադարեցնում:
33. Ի՞նչ իրավական ակտով է ստեղծվում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:
34. Ո՞վ է նշանակում Հատուկ հանձնարարություններով դեսպանին:
35. Պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում ո՞վ է կայացնում:
36. Ո՞ր երկիրն է ձեռնարկել <<Մեկ գոտի, մեկ ճանապարհ>> նախաձեռնությունը:
37. Ո՞ր երկրում է Չինաստանը հիմնել իր առաջին ռազմաբազան:
38. Հո Շի Մինը ո՞ր երկրի ազգային հերոսն է:
39. Ասիական ո՞ր երկրում վերջին շրջանում վերսկսվեցին բուդդայականության հետևորդների և ռոհինջա մահմեդականների միջև հակամարտությունն ու բախումները:
40. Ո՞ր երկրների միջև է հակամարտությունը Արևելաչինական ծովի շուրջ:
41. Ո՞ր երկիրն ունի աշխարհում ամենամեծ մահմեդական բնակչությունը:
42. Ո՞ր երկրից անկախացավ Արևելյան Թիմորը:
43. Ո՞ր երկրի անունն է տեղացի բնակիչների կոչմամբ թարգմանվում «Լուսաբացի թարմության երկիր»:
44. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը
45. Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ո՞ր երկրում է 1820-1832թթ. տեղի ունեցել այսպես կոչված «Սև պատերազմը»:
46. Ո՞ր պետությունն ունի երկու պաշտոնական օրհներգ:
47. Ասիական ո՞ր պետության վերաբերյալ է վերջին 2 տարում ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ընդունել 5 բանաձև:
48. Ո՞ր քաղաքական գործիչն է համարվում հայտնի «Բարեփոխումների և բաց դռների քաղաքականության» հեղինակը:
49. Ո՞ր թվականին է Չինաստանը որդեգրել «Բարեփոխումների և բաց դռների քաղաքականությունը»:
50. Ինչպիսի՞ն է Ֆիլիպինների պետական կառավարման համակարգը:
51. Ո՞ր երկրները Հարավչինական ծովում գտնվող Սկարբորոյի ծովախութի շուրջ տարածայնություններ ունեն:
52. Ո՞ր երկրի անունն է թարգմանաբար նշանակում «ազատների հող»:
53. Ո՞ր պետությունն է նախկինում կոչվել Սիամ:
54. Ո՞ր կրոնն է Թայլանդում ամենատարածվածը:

55. Ո՞ր պետությունն է նախկինում կոչվել Արևելյան Պակիստան:
56. Հնդկաստանի տարածքից 1947թ. ի՞նչ պետություն է անջատվել:
57. Ո՞րն է Հնդկաստանի պետական կառավարման ձևը:
58. Ավստրալիայի ո՞ր նահանգն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
59. Քանի՞ միապետություն կա Հարավարևելյան Ասիայում:
60. Հարավարևելյան Ասիայի քանի՞ երկիր է հանդիսանում կոմունիստական պետություն:
61. Հարավարևելյան Ասիայի ո՞ր երկիրն է հանդիսանում G-20-ի անդամ:
62. Հարավարևելյան Ասիայի ո՞ր երկիրն է առաջինը ստորագրել Ազատ առևտրի համաձայնագիր Եվրասիական տնտեսական միության հետ:
63. Ինչպե՞ս է կոչվում Մետաքսի ճանապարհի չինական նոր նախաձեռնությունը:
64. Ո՞ր երկրում է տեղի հայկական եկեղեցին ներառված ազգային ժառանգության ցանկում:
65. Ինչպե՞ս է կոչվում հայ հրատարակիչի կողմից Սինգապուրում հիմնադրված թերթը:
66. Ինչպե՞ս է կոչվում Ճապոնիայի խորհրդարանը:
67. Քանի՞ պետություն է ճանաչում Թայվանը որպես անկախ պետություն:
68. Ինչպե՞ս են Թայվանում անվանում իրենց պետությունը:
69. Ո՞րն է ճապոնական-հարավկորեական հարաբերությունների պատմական զգայուն խնդիրը:
70. Ո՞ր սկզբունքն է առաջնային Հնդկաստանի համար Ջամմու և Քաշմիրի խնդրում:
71. Ե՞րբ է տեղի ունեցել հնդկա-պակիստանյան առաջին պատերազմը:
72. Ո՞րն է Հնդկաստանի պետական կառավարման ձևը:
73. Ո՞ր երկրի խորհրդարանը վերջերս որոշում ընդունեց իրավունք տալ միապետին հրաժարվելու գահից:
74. Ո՞ր երկիրն է թեյի արտահանմամբ առաջատար դիրքեր զբաղեցնում աշխարհում:
75. Ինչպե՞ս են այլ կերպով անվանում ՆԱՏՕ-ն:
76. Քանի՞ անդամ ունի ՆԱՏՕ-ն ներկայումս:
77. Ո՞րտեղ է գտնվում ՆԱՏՕ-ի կենտրոնակայանը:
78. Ո՞վ է ՆԱՏՕ-ի ներկայիս գլխավոր քարտուղարը:
79. Ժամանակագրական առումով ո՞ր երկիրն է ՆԱՏՕ-ի ամենանոր անդամը:
80. Ո՞ր թվականին է Հայաստանը միացել ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության (PfP) ծրագրին:
81. Ո՞ր պարբերական փաստաթղթում են ամրագրվում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության հիմնական ուղղությունները:
82. Ո՞ր երկրի վարչապետն է եղել Բենազիր Բհուտոն:
83. 1947թ. ո՞ր պետությունից անկախացավ Հնդկաստանը:
84. Ի՞նչ կրոն են դավանում Չինաստանում բնակվող ույղուրները:

**85.** Ո՞վ է համարվում Հնդկաստանում առանց բռնության քաղաքացիական անհնազանդության շարժման հիմնադիրը:
**86.** Ե՞րբ է ստեղծվել ԵԱՀԿ-ն:
**87.** ԵԱՀԿ ո՞ր ձևաչափում են ընթանում ԼՂ հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցությունները:
**88.** Ու՞մ միջնորդությամբ է հաստատվել 1994 թվականի մայիսի 12-ի հրադադարը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում:
**89.** Ո՞ր պետությունների միջև է հակամարտությունը Ջամմու և Քաշմիր նահանգի համար:
**90.** ԱՄՆ ո՞ր նահանգի Ազգային գվարդիայի հետ է ՀՀ 2003թ.-ից համագործակցում ռազմական կրթության, խաղաղապահ կարողությունների զարգացման ու արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտներում՝ «Նահանգային գործընկերության» ծրագրի շրջանակներում:
**91.** Ո՞ր երկրում է ՀՀ խաղաղապահ բրիգադը գործում ամերիկյան հրամանատարության ներքո:
**92.** Ի՞նչ անվանում ունի Հայաստան-ԱՄՆ միջկառավարական խորհրդակցությունների ձևաչափը՝ սկսած 2019թ. մայիսից:
**93.** ԱՄՆ, ո՞ր երեք նախագահներն են ենթարկվել իմպիչմենտի, սակայն շարունակել են պաշտոնավարել:
**94.** Ամերիկահայ ո՞ր քաղաքական գործիչն է զբաղեցրել ԱՄՆ Ռազմածովային քարտուղարի ու Պաշտպանության քարտուղարի տեղակալի պաշտոնները:
**95.** ԱՄՆ-ում ո՞ր պաշտոնյան է ի պաշտոնե հանդիսանում նաև ԱՄՆ Սենատի նախագահը:
**96.** Ո՞ր միջազգային իրավական փաստաթղից ԱՄՆ-ը դուրս չի եկել Դոնալդ Թրամփի պաշտոնավարման օրոք:
**97.** Ո՞րն է Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես չճանաչած ԱՄՆ միակ նահանգը:
**98.** Ի՞նչ ծրագիր է 2000թ.-ից Արցախում իրականացրել HALO Trust կազմակերպությունը՝ ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ:
**99.** Ի՞նչ կարգավիճակ ունեն Յուկոնը և Նունավուտը Կանադայի կազմում:
**100.** Ո՞ր համաժողովին մասնակցելու նպատակով էր Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոն ժամանել Հայաստան:
**101.** Ո՞ր մայրաքաղաքում է գտնվում ՀՀ-ում Կանադայի դեսպանի նստավայրը:
**102.** Ե՞րբ է ՀՀ միացել ԱՄՆ կողմից նախաձեռնված «Կրոնական ազատության միջազգային ալյանս»-ին:
**103.** Ո՞րն է Հայոց ցեղասպանությունը ճանաչած առաջին երկիրը:
**104.** Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հարավամերիկյան ո՞ր երկու երկրների միջև է պատերազմ տեղի ունեցել:
**105.** Հարավամերիկյան ո՞ր պետությունն ունի աշխարհում նավթի ամենահարուստ պաշարները:
**106.** Ո՞ր երկրների հետ է սահմանակցում Վենեսուելան:

**107.** 1986թ. կայացրած վճռով Արդարադատության միջազգային դատարանը ԱՄՆ-ին պարտավորեցրեց վճարել ռեպարացիաներ այդ երկրին՝ երկրում հակաիշխանական խմբավորումներին աջակցելու, միջազգային իրավունքի մի շարք սկզբունքներ խախտելու համար:

**108.** Նշվածներից ո՞ր միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարն է հանդիսանում Լուիս Ալմագրոն:

**109.** Ու՞մ ռեժիմի դեմ էր ուղղված Գվատեմալայի հեղափոխությունը 1944-1954թթ.:

**110.** Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովը բաղկացած է:

**111.** Որ պետությունն է Հայաստանի Հանրապետության խոշորագույն առևտրային գործընկեր:

**112.** Որ պաշտոնյաներն են ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահներ:

**113.** Նշված կենտրոնասիական երկրներից որն ունի ելք դեպի Կասպից ծով:

**114.** Որ պետությունը չի հանդիսանում Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի (Թյուրքական խորհուրդ) անդամ:

**115.** Ինչ է քվեարկել Հայաստանը 2014թ. մարտի 27-ի ՄԱԿ ԳԱ 68/262 բանաձևին /ի պատասխան Ղրիմի թերակղզու բռնակցմանը Ռուսաստանին/:

**116.** Ո՞վ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդում:

**117.** Ե՞րբ է ընդունվել ԱՊՀ կանոնադրությունը:

**118.** Որտե՞ղ է տեղակայված ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը:

**119.** Երբ է ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը:

**120.** Ո՞ր երկիրն ունի ԵԱՏՄ դիտորդի կարգավիճակ:

**121.** Ե՞րբ է հաստատվել Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունը:

**122.** Որն է ՀԱՊԿ բարձրագույն մարմինը:

**123.** Ի՞նչ ժամկետներով են ստանձնում անդամ պետությունները Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունում նախագահությունը:

**124.** Ո՞ր համաձայնագրով են համակարգվում ՀՀ-ԵՄ հարաբերությունները:

**125.** ԵՄ անդամ ո՞ր երկրների նախաձեռնությամբ է 2009 թվականին ազդարարվել Արևելյան գործընկերության մեկնարկը:

**126.** 2007 թվականին ստորագրված ո՞ր համաձայնագիրը լրամշակեց ԵՄ գործունեության սահմանադրական հիմքը հանդիսացող երկու համաձայնագրերը:

**127.** Որո՞նք են ԵՄ հիմնական կառույցները:

**128.** Ու՞մ է հանձնում Անդորրայում օտարերկրյա նորանշանակ դեսպանն իր հավատարմագրերերը:

**129.** Ի՞նչ արտոնագրով կարելի է այցելել Ջիբրալթար:

**130.** Ո՞ր թվականին և ո՞ր նախագահի օրոք Ֆրանսիայում հանրաքվեի անցկացման միջոցով ընդունվեց օրենք՝ նախագահի մանդատի տևողությունը 7-ից 5 տարի կրճատելու մասին:

**131.** Ո՞վ է այն շվեդ միսիոները, ով Հայոց ցեղասպանության տարիներին հայ ժողովրդին ցուցաբերել է աջակցություն:

**132.** Ո՞ր երկրի/երկրների հետ երկկողմ հարաբերություններն է նաև համակարգում ԳԴՀ-ում ՀՀ դեսպանությունը:

**133.** Ո՞ր թվականին է Հայաստանի Հանրապետությունը դարձել Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ:

**134.** Եվրոպայի խորհրդի ո՞ր հիմնարար փաստաթղթի 70-ամյակն է նշվում 2020թ. :

**135.** Կոմունիստական իշխանության տապալումից հետո ո՞ր երկրի ղեկավարը մահապատժի ենթարկվեց:

**136.** Բալկանյան ո՞ր երկրի բնակչության մեծամասնությունն է կաթոլիկ:

**137.** Ո՞ր մայրաքաղաքն է հակամարտության արդյունքում դեռևս մնում բաժանված երկու մասի:

**138.** 1993թ. տեղի ունեցած «թավշյա ապահարզանից» հետո ո՞ր երկրի օրհներգն է նույնպես կիսվել երկու մասի և կազմել այդ պետությունների օրհներգերի մաս:

**139.** Ո՞ր եվրոպական պետության օրենսդրության հիմքում է ընկած Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»:

**140.** Որն է /որո՞նք են «Ապոստիլ դնելու իրավունք ունեցող պետական լիազորված մարմիններ նշանակելու մասին» ՀՀ Կառավարություն 1995 թվականի թիվ 15 որոշման համաձայն՝ փաստաթղթերի վրա ապոստիլ դնելու պետական լիազորված մարմի (մարմիններ):

**141.** Ո՞վ կարող է լինել ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավար:

**142.** Ե՞րբ է անցնում իր պարտականությունների կատարմանը ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը.

**143.** Ո՞վ է նշանակում ՀՀ հյուպատոսական հիմնարկի ղեկավարին:

**144.** Ի՞նչ ժամկետով է տրամադրվում մինչև 6 տարեկան ՀՀ քաղաքացիների անձնագրերը:

**145.** Քանի՞ տարին լրացած, գործունակ անձն իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

**146.** Ու՞մ է տրվում հատուկ կացության կարգավիճակ ՀՀ-ում:

**147.** Ի՞նչ ժամկետով է տրվում Հատուկ կացության կարգավիճակը:

**148.** Ո՞ր դեպքում է մերժվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը:

**149.** Ո՞ր դեպքում է տրվում ՀՀ վերադարձի վկայականը:

**150.** Ի՞նչ է հյուպատոսական հաշվառումը:

**151.** Ի՞նչ է ՀՀ վերադարձի վկայականը:

152. ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններից որի՞ն է տրված Խոսքի, Մամուլի և Տեղեկատվության ազատությունների խրախուսման հատուկ մանդատ:
153. Ո՞վ է ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը:
154. Ո՞րն է հանրային դիվանագիտության նպատակը:
155. Ի՞նչ է նշանակում «CNN effect»:
156. Ի՞նչի մասին էին «Cambridge Analytica» ընկերության կողմից «Facebook» հարթակի միջոցով անձնական տվյալների հավաքագրմանն առնչվող սկանդալային բացահայտումները:
157. Ո՞ր թերթի սյունակագիր էր Ստամբուլում Սաուդյան Արաբիայի հյուպատոսությունում սպանված Ջամալ Խաշոգջին:
158. Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ ո՞րն է ստացված հարցումներին պատասխանելու ճշգրիտ ժամկետ, եթե լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության չկա:
159. Ինչի՞ հիման վրա է սահմանվում «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից հրապարակվող Մամուլի ազատության ինդեքսի (Press Freedom Index) ցուցանիշը:
160. Ո՞րն է ԵՄ Ռազմավարական հաղորդակցությունների ուղղությամբ օպերատիվ աշխատանքային խմբի (East StratCom Task Force) նախաձեռնության նպատակը:
161. Որո՞նք են Կարմիր խաչի ու կարմիր մահիկի միջազգային շարժման անդամներ:
162. Ո՞ր երկրի խորհրդարանն է 2020թ. փետրվարին ընդունել բանաձև՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ:
163. Ո՞ր երկրներն են միացել 1949թ. Ժնևյան 4 կոնվենցիաներին և 1977թ. 2 լրացուցիչ արձանագրություններին:
164. ՄԱԿ-ի ո՞ր պաշտոնյան է զբաղվում ցեղասպանությունների կանխարգելման հարցերով:
165. Որո՞նք են ԵԱՀԿ մասնագիտացված մարմինները:
166. Ո՞ր թվականին է ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնաժողովը վերակազմավորվել Մարդու իրավունքների խորհրդի և ինչու՞
167. ՄԱԿ ո՞ր գխավոր մարմնի մաս է կազմում Մարդու իրավունքերի Գերագույն հանձնակատարի գրասենյակը:
168. Քանի՞ անգամ է Հայաստանը ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում ներկայացրել Համընդհանուր պարբերական դիտարկման զեկույց:
169. Ո՞վ է Մարդու Իրավունքների Հռչակագիրն անվանել «Ազատությունների մեծ կանոնադրություն» ողջ մարդկության համար:
170. Քանի՞ տարի ժամկետով են ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում պետությունները որպես անդամ երկիր ընտրվում:
171. Ներկայումս ո՞վ է հանդիսանում Հայաստանում UNICEF-ի բարի կամքի դեսպանը:
172. Ո՞ր արաբական երկիրը դիվանագիտական հարաբերություններ չունի Հայաստանի հետ:

**173.** Ո՞ր եկեղեցին է Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ միասին դավանաբանական առումով պատկանում միևնույն՝ Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքին:
**174.** Արաբական ո՞ր երկու երկրներն են ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
**175.** Ո՞վ է իրականացնում Գազայի հատվածի դե ֆակտո կառավարումը:
**176.** Ինչը ձևավորվեց 2015թ. Սխեյրատի համաձայնագրով:
**177.** Ովքե՞ր էին Ռուանդայի ցեղասպանության զոհերը:
**178.** Ի՞նչ է արվել 1989 թ. Սաուդյան Արաբիայի Տաիֆ քաղաքում ստորագրված համաձայնագրով:
**179.** Ո՞ր թվականի արաբա-իսրայելական պատերազմն է ընդունված անվանել Վեցօրյա պատերազմ:
**180.** Ու՞մ է պատկանում «երկու սուրբ տաճարների /մզկիթների/ պահապան» տիտղոսը:
**181.** Ո՞ր բանակցային գործընթացի արդյունքում է ստեղծվել Պաղեստինյան ինքնավարությունը:
**182.** Հայ բժիշկների և սակրավորների խումբն ի՞նչ առաքելություն է իրականացնում Սիրիայում սկսած 2019թ փետրվարից:
**183.** Ո՞ր երկրում 2010թ. սկիզբ առավ Արաբական գարուն կոչվող բողոքի շարժումը:
**184.** Ո՞ր երկրում քրդերն ունեն ինքնավարություն:
**185.** ՄԱԿ-ի ո՞ր խաղաղապահ առաքելությանն է մասնակցում ՀՀ զինուժը:
**186.** Ինչի՞ն էր հանձն էր առնում աջակցել Մեծ Բրիտանիան Բալֆուրի հռչակագրով:
**187.** Որքան է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի անդամ երկրների ընդհանուր թիվը:
**188.** Ի՞նչ ժամկետով է պաշտոնավարում ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նախագահը:
**189.** Որքա՞ն է ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամների թիվը:
**190.** Որքա՞ն է ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամների թիվը:
**191.** Որտե՞ղ է գտնվում արդարադատության միջազգային դատարանի կենտրոնակայանը:
**192.** Ե՞րբ է նշվում ՄԱԿ-ի օրը:
**193.** Որտե՞ղ է գտնվում աշխատանքի միջազգային կազմակերպության կենտրոնակայանը:
**194.** Ե՞րբ է ստորագրվել ՄԱԿ-ի կանոնադրությունը
**195.** Քանի՞ տարով են ընտրվում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամները:
**196.** ՄԱԿ-ի ո՞ր մասնագիտացված գործակալությունն է ցուցակագրում Համաշխարհային ժառանգության վայրերը:
**197.** ՄԱԿ-ի ո՞ր մարմինն է պատասխանատում ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների աշխատաքների համակարգման համար:
**198.** Ո՞վ է Միավորված ազգեր (United Nations) տերմինի հեղինակը:
**199.** Քանի՞ անդամ ունի ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը:

200. ՄԱԿ-ի ո՞ր գործակալությունն է զբաղվում կրթության ստանդարտների բարելավմամբ և ոլորտում միջազգային համագործակցության խթանմամբ:
201. Ո՞ր քաղաքում է տեղակայված ՄԾՏՀ կենտրոնակայանը:
202. Ե՞րբ է Հայաստանի Հանրապետությունը անդամակցել Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը (FAO):
203. Ե՞րբ է Հայաստանի Հանրապետությունը անդամակցել Ծովագնացության միջազգային կազմակերպությանը (IMO):
204. Ո՞րտեղ է նախատեսվում անցկացնել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) 2021թ. տարեկան ժողովը:
205. Ո՞ր թվականին է ՀՀ-ն ընտրվել որպես ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի անդամ:
206. Քանի՞սն են ՄԱԿ-ի 2030 օրակարգում ներառված Կայուն զարգացման նպատակները:
207. Ինչպիսի՞ կարգավիճակ ունի Իրանը ԵԱՏՄ-ում:
208. Ո՞վ է հանդիսանում Իրանի պետության գլուխը:
209. Ի՞նչ պետական համակարգ է գործել Իրանում մինչև 1979թ. Իսլամական հեղափոխությունը:
210. Ո՞ր երկրների հետ Իրանը ունի ցամաքային սահման:
211. Ո՞րն է Վրաստանի պաշտոնական անվանումը:
212. Ո՞րն է Վրաստանի կարգավիճակը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունում:
213. Ո՞րն է Թուրքիայի կարգավիճակը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունում:
214. Ո՞րն է ԱՊՀ-ում Ադրբեջանի կարգավիճակը:
215. Ո՞ր թվականին է ընդունվել ՀՀ ազգային անվտանգության առաջին ռազմավարությունը:
216. Ո՞րն է ամենահին միջազգային իրավական ակտը:
217. Ի՞նչ ժամկետով են պահպանվում նոտաներն ու հուշագրերը:
218. Ի՞նչ ժամկետով են պահպանվում ՀՀ դեսպանություններից և հյուպատոսական հիմնարկներից ստացված տեղեկատվությունները դեսպանընկալ պետության հետ երկկողմ հարաբերությունների վերաբերյալ:
219. Ի՞նչ ժամկետով են պահպանվում գրագրությունները ՀՀ-ում գործող օտարերկրյա դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների հետ:
220. Ի՞նչ ժամկետով են պահպանվում ագրեմանները:
221. Ո՞ր թվականին է տեղի ունեցել արաբական առաջին արշավանքը Հայաստան:

222. Երբ ստացան վերջնական անկախություն Օսմանյան կայսրության կազմում գտնվող արաբական պետությունները:
223. Ե՞րբ ընդունվեց Բալֆուրի հռչակագիրը:
224. Ե՞րբ և որտե՞ղ ստորագրվեց Օսլոյի համաձայնագիրը Իսրայելի և ՊԱԿ-ի միջև:
225. Արաբական ո՞ր պետությունները 1958թ. կազմավորեցին Միացյալ Արաբական Հանրապետությունը:
226. Ե՞րբ կայացավ Արաբական Միացյալ Էմիրությունների ձևավորումը:
227. Ե՞րբ Քուվեյթի վրա հարձակվեց Իրաքը:
228. Քանի՞ երկիր է մտնում Արաբական լիգայի կազմի մեջ:
229. Ո՞րն է Սաուդյան Արաբիայի որդեգրած պաշտոնական կրոնական ուսմունքը
230. ՈՒ՞մ է ներկայացնում լիբանանյան «Ամալ» կուսակցությունը:
231. Ո՞ր երկիրն է տնօրինում աշխարհի նավթի ամենամեծ պաշարները:
232. Թեոկրատական կառավարման ձևը ենթադրում է երկրի ինչպիսի՞ ղեկավարում:
233. Ո՞վ է եղել Եգիպտոսի պատմության մեջ առաջին վարչապետը:
234. Ո՞րն է Մերձավոր Արևելքի միակ կղզի պետությունը:
235. Ո՞ր թվականին է հիմնադրվել Արաբական Պետությունների Լիգան:
236. Ո՞վ էր Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության առաջին գլխավոր քարտուղարը:
237. Որտե՞ղ է գտնվում Իսլամական համագործակցության կազմակերպություն կենտրոնակայանը:
238. Ու՞մ կողմից է օկուպացված Արևմտյան Սահարայի տարածքի հիմնական մասը:
239. Ե՞րբ է տեղի ունեցել Կոսովոյի պատերազմը
240. Համաձայն Լիբանանի սահմանադրության ո՞ր կրոնական համայնքին պետք է պատկանի այդ երկրի նախագահը:
241. Որո՞նք են Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուները:
242. Նշված լեզուներից ո՞րը ՄԱԿ-ի պաշտոնական լեզուն չէ:
243. Միավորված ազգերի կազմակերպության ո՞ր մարմինն է պատասխանատու միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման եւ պաշտպանության համար:
244. ՄԱԿ-ի մարմիններից որը չի գտնվում Նյու-Յորքի կենտրոնական գրասենյանկում:
245. Ո՞ր քաղաքում է գտնվում ԱՊՀ կենտրոնակայանը:
246. Ո՞ր քաղաքում է գործում ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը:
247. Ո՞ր թվականից է Պարսկաստանը վերանվանվել Իրան:
248. Ո՞ր քաղաքն է համարվում ԵՄ ադմինիստրատիվ կենտրոն:
249. Որտե՞ղ է գտնվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:
250. Նշված ո՞ր պետության կողմից է ճանաչվել Հյուսիսային Կիպրոսը:
251. Ո՞րն է Մեքսիկայի պաշտոնական անվանումը:
252. Ու՞մ է վարչականորեն պատկանում Գրենլանդիան:
253. Ասիական ո՞ր երկրի սահմանադրությամբ է արգելվում ազգային բանակի ստեղծումը:
254. Ի՞նչ է առեւտրային էմբարգոն:
255. Քանի անդամ ունի ԵԱՀԿ-ն:

256. Ո՞ր պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սեւրի պայմանագիրը:
257. Ո՞ր թուրքական կուսակցությունը իրականացրեց հայոց ցեղասպանությունը:
258. Ո՞ր փաստաթղթով է Նախիջեւանը վերածվել ինքնավար մարզի եւ ներառվել Ադրբեջանի կազմում:
259. Ո՞րոնք են Կասպից ծովի ափամերձ պետությունները:
260. Ո՞ր չորս հայկական թագավորությունների զինանշաններն են զետեղված ՀՀ պետական զինանշանի վրա:
261. Նշվածներից ո՞վ է որոշում ընտրությունների օրը Մեծ Բրիտանիայում:
262. Ո՞ր քաղաքում են հանձնում Նոբելյան խաղաղության մրցանակը:
263. Նշվածներից ո՞րն է ՄԱԿ-ի փախստականների հարցերով ծրագիրը:
264. Ո՞րն է ՄԱԿ-ի երեխաների հարցերով ծրագիրը:
265. Ո՞րքան է Արդարադատության միջազգային դատարանի դատավորների թիվը եւ քանի՞ տարով են ընտրվում:
266. Ո՞ր պետության տարածքն է Ջիբրալթարը:
267. Նշվածներից ո՞րն է Իտալական Հանրապետության կառավարման ձևը:
268. Ո՞ր երկրների միջեւ է Ջիբրալթարը համարվում վիճելի տարածք
269. Ո՞ր թվականին է կնքվել Միջուկային Զենքի չտարածման պայմանագիրը:
270. Ո՞րն է եղել առաջին խորհրդարանական պետությունը աշխարհում:
271. Հետևյալ երկրներից ո՞րը 1905 թ. անկախացավ Շվեդիայից:
272. Ի՞նչպես է կոչվում Իսրայելի խորհրդարանը:
273. Ի՞նչ է «Կարտ-բլանշը»:
274. Հ. Քիսինջերի «մաքոքի դիվանագիտություն» արտահայտությունը ո՞ր կոնֆլիկտի կարգավորման առիթով է մտել շրջանառության մեջ:
275. Ո՞ր թվականին է ազատագրվել Շուշին:
276. Ե՞րբ է հաստատվել զինադադար ԼՂ հակամարտությունում:
277. Վարչականորեն ո՞ր երկրին է ենթակա Անտարկտիդան:
278. 20-րդ դարում Միջազգային ո՞ր պայմանագրով էր Հայաստանը ելք ստանում դեպի Սեւ ծով:
279. Հայկական իրավական օրենսգրքի՝ «դատաստանագրքի» հեղինակը:
280. Ո՞րքան ժամանակով են ընտրվում ԱԽ ոչ մշտական անդամները եւ քանի ոչ մշտական անդամ ունի ԱԽ–ն:
281. Ո՞ր պայմանագրով Արեւելյան Հայաստանը ամբողջությամբ միացվեց Ռուսական կայսրությանը:
282. Ի՞նչ է «ապարտեիդը»:
283. Ի՞նչ է «աբսենտիզմը»:
284. Ի՞նչ է «ռադիկալիզմը»:
285. Ո՞վքեր են բիպատրիդները:
286. Ո՞վքեր են ապատրիդները:
287. Ո՞վ էր Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետը:
288. Ի՞նչ է ռեստիտուցիան:
289. Ի՞նչ է միջազգային դելիկտը:
290. Ի՞նչ կարգավիճակ ունի Համաշխարհային Բանկի խումբը:
291. Ո՞վ է եղել աշխարհի առաջին կին վարչապետը:
292. Ո՞ր բնագավառում է նոբելյան մրցանակ ստացել Ուինստոն Չերչիլը:
293. Ո՞ր երկրում է տեղի ունեցել առաջին բուրժուական հեղափոխությունը:

294. Ո՞րն է Գերմանիայի խորհրդարանի վերին պալատը:
295. Ո՞րն է Գերմանիայի խորհրդարանի ստորին պալատը:
296. ԵՄ անդամ ո՞ր երկիրը սկզբնապես մերժեց Մաասթրիխտի համաձայնագիրը:
297. Ո՞ր երկրների միջեւ է գտնվում Կալինինգրադը:
298. Ե՞րբ է սկսվել Երկրորդ համաշխարհային պատերազմը:
299. Ո՞րտեղ է գտնվում Շենգենը:
300. Ո՞ր օրն է նշվում որպես Եվրոպայի օր:
301. Ո՞ր պետության հետ ՀՀ-ն ունի ամենակարճ սահմանը:
302. Ո՞ր պետության հետ ՀՀ-ն ունի ամենաերկար սահմանը:
303. Ի՞նչ է էքստրադիցիան:
304. Ի՞նչ է նշանակում «պրեֆերենսիա»:
305. Ինչպե՞ս է կոչվում որևէ երկրի կառավարության և Հռոմի պապի որպես կաթոլիկ եկեղեցու գլխի միջև կնքված պայմանագիրը:
306. Ո՞ր քաղաքական գաղափարախոսությունն է նկարագրում կառավարման այն ձևը, որտեղ կրոնը կամ հավատքը խաղում է դոմինանտ դեր:
307. Ինչպե՞ս կանվանեք արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը, որը հակառակվում է բռնությանը որպես վեճերի կարգավորման միջոց:
308. Ե՞րբ է կայացել Հաագայի կոնգրեսը, որը պատմության մեջ է մտել «Եվրոպայի կոնգրես» անունով:
309. Թեհրանում գտնվող ո՞ր երկրի դեսպանության միջոցով է ԱՄՆ-ը 1979թ. ի վեր կապ պահպանում իրանական կառավարության հետ:
310. Ո՞ր երկիրը 1951թ. Ճապոնիայի հետ չկնքեց Սան-Ֆրանցիսկոյի պայմանագիրը:
311. Ո՞վ էր ղեկավարում հայկական պատվիրակությունը պարտված Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու համար 1920թ. Սան-Ռեմոյում հրավիրված դաշնակիցների կոնֆերանսում:
312. Ի՞նչ վարչատարածքային միավոր ստեղծվեց Արևելյան Հայաստանում 1828թ Ռուսաստանի կողմից գրավվելուց հետո:
313. Հայ մեծանուն գործարար-բարեգործներից ու՞մ մականունն է եղել «Պարոն 5%»:
314. Որ թերթի խմբագիրն էր Հրանտ Դինքը:
315. Ե՞րբ են սահմանվել Նանսենի անձնագրերը:
316. Ի՞նչ է նշանակում «բուֆերային պետություն»:
317. Նշված երկրներից որն է սոցիալ-ժողովրդավարությունը ընդունել որպես երկրի գլխավոր քաղաքական գաղափարախոսություն 20-րդ դարի վերջերին:
318. Ո՞ր պետություն Գերմանիայի ներխուժմամբ սկսվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմը:
319. Որ՞ պետություններն են սահմանակցում Թուրքիային:
320. Ո՞ր ջրերն են բաժանում Ստամբուլի եվրոպական մասը ասիական մասից:
321. Ո՞րոնք են Կանադայի պետական լեզուները:
322. Քանի՞ երկիր է սահմանակցում Սեւ Ծովին:
323. Ո՞ր թվականին է կնքվել Բաթումի հաշտության պայմանագիրը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ:
324. Ո՞ր կազմակերպության ղեկավարն է եղել Նելսոն Մանդելան:
325. Եվրոպական խորհրդարանի լրացուցիչ պլենար նստաշրջանները որտեղ են կայանում:
326. Միջազգային իրավունքով թույլատրվու՞մ է արդյոք զենքի փորձարկումը տիեզերքում:

327. Ո՞վ է «քաղաքակրթությունների բախում» արևմտյան քաղաքական գաղափարախոսության հեղինակը:
328. Տարին քանի՞ անգամ են տեղի ունենում ԵԽԽՎ նստաշրջանները:
329. Մինչեւ իսլամական հեղափոխությունը ինչպիսի՞ն էր պետական կարգն Իրանում:
330. Ե՞րբ վերամիավորվեցին երկու Գերմանիաները:
331. Ի՞նչ է ՄԵՐԿՈՍՈՒՌ-ը:
332. Ո՞ր պետություններն են հանդիսանում ՄԵՐԿՈՍՈՒՌ-ի լիարժեք անդամ:
333. 1803թ. Ամերիկան ո՞ր երկրից է գնել Լուիզիանա նահանգը:
334. Ո՞վ է հաստատում ՄԱԿ-ի բյուջեն:
335. Ե՞րբ է ստորագրվել Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը:
336. Ռուսական ո՞ր կայսեր հրամանով է նախաձեռնվել հայերի վերաբնակեցումը Ղրիմի թերակղզուց Դոն գետի ավազան:
337. Ո՞վ է հանրահայտ «Ուժն է ծնում իրավունք» եւ «Նպատակն արդարացնում է միջոցը» խոսքերի հեղինակը:
338. Ո՞ր ամսին է սովորաբար սկսվում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանը:
339. Ո՞ր լեզուներով է լույս տեսնում պոլսահայ «Ակոս» օրաթերթը:
340. Ո՞ր երկրի կազմի մեջ է մտնում Ջամմու նահանգը:
341. Ե՞րբ է կնքվել հրադադարի համաձայնագիրը Հարավային Կորեայի եւ Հյուսիսային Կորեայի միջեւ:
342. Ո՞ր պետությունների կառավարություններին, համաձայն Տրումենի դոկտրինայի, պետք է շտապ ցուցաբերվեր ամերիկյան օգնություն:
343. Որտե՞ղ է հիմնադրվել Մխիթարյանների միաբանությունը:
344. Ո՞ր երկրները հիմնեցին Անտանտը:
345. Բեռլինի կոնգրեսի ժամանակ ո՞վ էր ղեկավարում հայկական պատվիրակությունը:
346. Ո՞վ էր Զանգեզուրի սպարապետը 1920-ականներին:
347. Ո՞ր երկրում է դեսպան ունեցել Հայաստանի առաջին Հանրապետությունը 1920թ.:
348. Որքա՞ն է տեւել Իրան-Իրաք պատերազմը:
349. Խորհրդային Միության առաջին նախագահը:
350. Ո՞ր պետությունից է անկախացել Էրիտրեան:
351. Ո՞ր պետություններն ունեն վետոյի իրավունք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում:
352. Որտե՞ղ է գտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնատեղին:
353. Ո՞րն էր 1956թ. Եգիպտոսի նկատմամբ անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիայի հիմնական դրդապատճառը:
354. Ո՞վ է «պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով» արտահայտության հեղինակը:
355. Ո՞ր քաղաքում է գտնվում Մերկոսուրի խորհրդարանը:
356. Ո՞ր թվականին է Մերկոսուրի խորհրդարանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
357. Ե՞րբ է պաշտոնապես բացվել Պանամայի ջրանցքը:
358. Ո՞րն է Արգենտինայի դիրքորոշումը Մալվինյան (Ֆոլկլենդյան) կղզիների դեռևս չկարգավորված խնդրի վերաբերյալ:
359. Ու՞մ կողմից է պաշտոնապես իրականացվում Ճամայկայի ղեկավարումը:

**360.** Ո՞ր թվականին և ի՞նչ նպատակներով է ստեղծվել ԱՄՆ Ռազմածովային ուժերի բազային Գուանտանամո բանտը:
**361.** Ո՞ր թվականին է ստեղծվել Ռիոյի Խումբը:
**362.** Ո՞ր երկրում է տեղի ունեցել Սանդինիստական հեղափոխությունը:
**363.** Ի՞նչ նպատակով է Բոլիվիան Չիլիի դեմ հայց ներկայացրել Հաագային դատարանում:
**364.** Նշված լեզուներից ո՞րն է իսպաներենի հետ միասին համարվում Պարագվայի պաշտոնական լեզուն:
**365.** Ո՞ր քաղաքակրթությունն է ծաղկել Պերուի տարածքում:
**366.** Ո՞ր միջազգային պայմանագրի հիման վրա է ստեղծվել և գործում Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն:
**367.** Ո՞ր մարմնի կողմից են ընտրվում ՄԱԿ հատուկ ընթացակարգերը:
**368.** Ինչպե՞ս է կոչվում Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման: (թրաֆիքինգի) դեմ պայքարի կոնվենցիայի դրույթների կատարումը վերահսկող մարմինը:
**369.** Ի՞նչ է « Նանսենյան անձնագիրը» և ով է այն սահմանել:
**370.** Ի՞նչ է ինտերվենցիան:
**371.** Ի՞նչ է անեքսիան:
**372.** Ի՞նչ է դեմարկացիան միջազգային իրավահարաբերություններում:
**373.** Ի՞նչ է դելիմիտացիան միջազգային իրավահարաբերություններում:
**374.** Ի՞նչ է Պակտա Սունտ Սերվանդա:
**375.** Ի՞նչ է դեմպինգը:
**376.** Ի՞նչ է դեֆլյացիան:
**377.** Ի՞նչ է օֆշորային գոտին:
**378.** Ո՞ր երկրներն են ընդգրկված ԲՐԻԿՍ միավորման կազմում:
**379.** Ինչպե՞ս է կոչվում 1991 թվականին ստեղծված Հարավային Ամերիկայի երկրների իտեգրացիոն տնտեսական խմբավորումը:
**380.** Միջազգային ո՞ր կոնվենցիաներով է կարգավորվում միջազգային հումանիտար իրավունքը:
**381.** Ո՞վ կարող է ստորագրել Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961թ. կոնվենցիան:
**382.** Միջազգային իրավունքով ե՞րբ է արդարացված ուժի կիրառումը:
**383.** Ե՞րբ է ընդունվել ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիան:
**384.** Ե՞րբ է ընդունվել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:
**385.** Ե՞րբ է ընդունվել պատերազմի զոհերի պաշտպանության Ժնեւի կոնվենցիան:
**386.** Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել Եվրոպական սոցիալական խարտիան:
**387.** Ե՞րբ և որտե՞ղ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը օմայյանների և աբբասյանների միջև, որից հետո իշխանությունն անցավ վերջիններիս:
**388.** Ո՞վ և ե՞րբ Պիրենեյան թերակղզու տարածքում հիմնեց Կորդովայի խալիֆայությունը /սկզբում՝ ամիրայություն/:
**389.** Ե՞րբ և ո՞վ կործանեց ֆաթիմյան խալիֆաների պետությունը:

**390.** Ո՞վ և ե՞րբ ստեղծեց սելջուկների պետությունը, որից հետո ուժեղացավ թյուրքական տարրի ներթափանցումը Մերձավոր և Միջին Արևելք:
**391.** Պանարաբիզմի գաղափարախոսության ծրագրի հիմնադիրը:
**392.** Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Կահիրեն:
**393.** Ինչպե՞ս է ՕՊԵԿ-ն իրականացնում նավթի գների կառավարումն աշխարհում:
**394.** Ե՞րբ և ո՞ր լեզվով է ստեղծվել «Մերձավոր Արևելք» տերմինը:
**395.** Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ՝ կապված Սուննի/Շիա մուսուլմանների հետ:
**396.** Ինչպե՞ս է Հորդանանի Հաշիմյան Թագավորության նախկին անվանումը:
**397.** Ինչպիսի՞ կառավարման համակարգ ունի Սուդանի Հանրապետությունը:
**398.** Ո՞վ է 1975թ-ին տպագրված «Կանաչ Գիրք» աշխատության հեղինակը:
**399.** Քանի՞ անգամ է Նուբար Փաշան զբաղեցրել Եգիպտոսի վարչապետի պաշտոնը:
**400.** Միջազգային ո՞ր կոնվենցիաներով է կարգավորվում միջազգային հումանիտար իրավունքը:
**401.** Ի՞նչ անվանում ունի Հայաստան-ԱՄՆ միջկառավարական խորհրդակցությունների ձևաչափը՝ սկսած 2019թ. մայիսից:
**402.** ԱՄՆ-ում ո՞ր պաշտոնյան է ի պաշտոնե հանդիսանում նաև ԱՄՆ Սենատի նախագահը:
**403.** Ո՞րն է Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես չճանաչած ԱՄՆ միակ նահանգը:
**404.** Կանադայի ո՞ր նահանգն է երկու անգամ անկախության հանրաքվե անցկացրել այս երկրից անկախանալու համար:
**405.** Ամերիկյան աշխարհամասի քանի պետություն է ընդգրկված G20-ի կազմում:
**406.** Ո՞րն է Մեքսիկայի կառավարման համակարգը:
**407.** Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հարավամերիկյան ո՞ր երկու երկրների միջև է պատերազմ տեղի ունեցել:
**408.** Նշվածներից ո՞ր միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարն է հանդիսանում Լուիս Ալմագրոն:
**409.** Ո՞ր երկիրն է տնօրինում աշխարհի նավթի ամենամեծ պաշարները:
**410.** Նշվածներից ո՞ր պետությունը չի հանդիսանում Հարավային Ամերիկայի երկրների ընդհանուր շուկայի (Mercosur) լիարժեք անդամ:
**411.** Ո՞ր քաղաքակրթությունն է ծաղկել Պերուի տարածքում:
**412.** Կենտրոնական Ամերիկայի ո՞ր պետությունը չունի բանակ:
**413.** Նշվածներից ո՞ր պետությունը չունի ելք դեպի ծով:
**414.** Ե՞րբ է դեսպանն անցնում իր պարտականությունների կատարմանը:
**415.** Իր գործունեությամբ ո՞ւմ է ենթակա և հաշվետու օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը:
**416.** Ո՞ր երկիրն է ՄԱԿ ԱԽ մշտական անդամ:
**417.** Ո՞ր կազմակերպությունում Հայաստանն ունի երկխոսության գործընկերոջ կարգավիճակ:
**418.** Ո՞ր երկիրը դեսպանություն չունի Հայաստանում:
**419.** Արևելյան Ասիայի ո՞ր երկրի բնակչության մեծամասնությունն է դավանում քրիստոնեություն:

**420.** Ո՞ր երկիրն ունի աշխարհում ամենամեծ մահմեդական բնակչությունը:
**421.** Ո՞ր երկրից անկախացավ Արևելյան Թիմորը:
**422.** Նշված ասիական երկրներից ո՞րն է թագավորություն:
**423.** Ո՞րն է Չինաստանի ամենաերկար գետը:
**424.** Նշյալ երկրներից ո՞րն է եղել Իսպանիայի գաղութ:
**425.** Ո՞ր պետությունն է նախկինում կոչվել Արևելյան Պակիստան:
**426.** Հնդկաստանի տարածքից 1947թ. ի՞նչ պետություն է անջատվել:
**427.** Որտե՞ղ և ե՞րբ է տպագրվել հայկական առաջին պարբերականը:
**428.** Ո՞րն է Հնդկաստանի պետական կառավարման ձևը:
**429.** Ինչպե՞ս է կոչվում Ճապոնիայի խորհրդարանը:
**430.** Ո՞ր սկզբունքն է առաջնային Հնդկաստանի համար Ջամմու և Քաշմիրի խնդրում:
**431.** Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրոշը այլ դրոշի հետ միաժամանակ բարձրացնելու դեպքում դեմքով դեպի այդ շենքը նայելիս Հայաստանի Հանրապետության դրոշը ո՞ր կողմից պետք է բարձրացվի տվյալ շենքի:
**432.** Դիվանագիտական գրագրության ո՞ր տեսակն է գրվում երրորդ դեմքով:
**433.** Պետական և պաշտոնական այցերի ժամանակ դիմավորման պաշտոնական արարողության ընթացքում պետական օրհներգերը ինչ հերթականությամբ են հնչում:
**434.** Այցի նշված տեսակներից ո՞րն է համարվում միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց՝ բանակցություններին, խորհրդակցություններին, միջազգային համաժողովներին կամ նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով կազմակերպվող այց:
**435.** Ի՞նչ իրավական ակտով է ստեղծվում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:
**436.** Ի՞նչ է հավատարմագիրը:
**437.** Դասակարգել հետևյալ պաշտոնատար անձանց համաձայն արարողակարգային ավագության:
**438.** Ո՞րը Դիվանագիտական գրագրության տեսակ չէ:
**439.** Նշված երկրներից ո՞րը չի հանդիսանում G20 անդամ:
**440.** Նշված երկրներից ո՞րն է շրջապատված դեպի ծով ելք չունեցող երկրներով՝ փաստացի հանդիսանալով կրկնակի դեպի ծով ելք չունեցող երկիր (doubly landlocked):
**441.** Նշված տարրերից որը՞ ներառված չէ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Աշխարհի հիշողության ռեգիստրում:
**442.** Ո՞վ է 1995 թվականին նշանակվել ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ առաջին մշտական ներկայացուցիչ:
**443.** Որքա՞ն է ՄԱԿ անդամ երկրների ընդհանուր թիվը:
**444.** Որքա՞ն է ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամների թիվը:
**445.** Որքա՞ն է ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամների թիվը:
**446.** Նշված երկրներից ո՞րը չի հանդիսանում Անվտանգության խորհրդի մշտական անդամ:
**447.** Հետևյալներից ո՞րը ՄԱԿ-ի պաշտոնական լեզու չէ:

**448.** Նշվածներից ո՞րը ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն չէ:
**449.** Քանի՞սն են ՄԱԿ-ի 2030 օրակարգում ներառված Կայուն զարգացման նպատակները:
**450.** Կենտրոնասիական ո՞ր պետությունն է վարում Չեզոքության քաղաքականություն:
**451.** Ո՞ր երկիրն է նախագահում Թյուրքական պետությունների կազմակերպությունում 2024 թվականին:
**452.** Ո՞ր թվականին է Հայաստանի Հանրապետությունը նախագահել Եվրասիական տնտեսական միության կանոնադրական մարմիններում:
**453.** Եվրասիական տնտեսական միության ո՞ր մարմնի անդամն է ՀՀ փոխվարչապետը:
**454.** Ո՞ր թվականին է վերջին անգամ Հայաստանի Հանրապետությունը նախագահել ՀԱՊԿ-ում:
**455.** Նշվածներից ո՞վ է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը:
**456.** Նշված պետություններից ո՞րը ԱՊՀ մասնակից պետություն չէ:
**457.** Ո՞րտեղ է ստորագրվել Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը:
**458.** Ո՞ր երկրներն են ստորագրել Ածխի և պողպատի եվրոպական համայնքի ստեղծման պայմանագիրը:
**459.** Ո՞ր պայմանագրով է ձևավորվել ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականությունը:
**460.** Քանի՞ տարով և ու՞մ կողմից են ընտրվում Եվրոպական խորհրդարանի պատգամավորները:
**461.** Ո՞ր թվականին է ուժի մեջ մտել ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:
**462.** Ո՞ր երկրների առաջարկությամբ է ձևավորվել Արևելյան գործընկերությունը:
**463.** Որ երկիրը չի հանդիսանում ԵՄ անդամ:
**464.** Նշված երկրներից ո՞րը չունի ելք Ադրիատիկ ծով:
**465.** Ե՞րբ է ՀՀ-ն ճանաչել Կոսովոյի անկախությունը:
**466.** Նշյալ երկրներից ո՞ր երկիրը չի հանդիսանում Վիշեգրադի քառյակի անդամ:
**467.** Նշված երկրներից ո՞րը չի հանդիսանում Եվրոպայի խորհրդի անդամ պետություն:
**468.** Ե՞րբ է Հայաստանի Հանրապետությունն անդամակցել Եվրոպայի խորհրդին:
**469.** Ո՞րտեղ է տեղի ունեցել Եվրոպայի խորհրդի վերջին՝ 2023թ. գագաթնաժողովը:
**470.** Ո՞րն կոնվենցիան է հանդիսանում Եվրոպայի խորհրդի կոնվենցիոն-իրավական համակարգի հիմքը:
**471.** Հիշատակվածներից ո՞րն է հանդիսանում Եվրոպայի խորհրդի որոշումներ կայացնող մարմին:
**472.** Ո՞րտեղ է գտնվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:
**473.** 2023թ. փետրվարի 22-ին ո՞ր դատարանի վճռով Ադրբեջանը պարտավորվեց ապահովել տրանսպորտի և մարդկանց անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով:

**474.** Ո՞ր քաղաքում տեղի ունեցած հանդիպման ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները պայմանավորվեցին ճանաչել միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը՝ ՄԱԿ-ի կանոնադրության և 1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրի դրույթների համաձայն:

**475.** Ինչպիսի՞ բնույթ ունի ԵՄ կողմից 2023թ. հունվարի որոշմամբ Հայաստանում տեղակայված առաքելությունը:

**476.** Ո՞րն է դիվանագետի պարտավորությունը ըստ Դիվանագետի էթիկայի կանոնների:

**477.** Ո՞րն է Հանրային դիվանագիտության նպատակը:

**478.** «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից հրապարակվող Մամուլի ազատության ինդեքսում (Press Freedom Index) ի՞նչ ցուցանիշ է ունեցել Հայաստանի Հանրապետությունը 2023թ:

**479.** Ո՞ր կառույցն է պատասխանատու ՀՀ-ում օտարերկրյա լրատվամիջոցների հավատարմագրման համար:

**480.** Ո՞ր երկիրն է մեր տարածաշրջանում հանդիսանում «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից հրապարակվող Մամուլի ազատության ինդեքսում (Press Freedom Index) առաջատարը:

**481.** Ո՞րն է օրենքով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու պետական լիազորված մարմին (մարմիններ):

**482.** Ո՞ր դեպքում է տրվում վերադարձի վկայականը:

**483.** Ո՞ր փաստաթղթերն են ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից վավերացման ենթակա:

**484.** Ո՞ւմ է աջակցում ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչությունն օտարերկյա պետությունների մուտքի վիզա ստանալու համար:

**485.** Համաձայն «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ Պատվավոր հյուպատոսներ ովքե՞ր կարող են լինել:

**486.** Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներն օտարերկրյա պետություններում պաշտպանում են:

**487.** Համաձայն «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.10.2023թ. N 1864-Ն որոշման՝ ինչ ժամկետով է տրվում ժամանակավոր պաշտպանության կարգավիճակը և երբվանից է սկսում ժամկետի հաշվարկը:

**488.** Վերոնշյալ փաստաթղթերից ո՞րը չի վավերացրել Ադրբեջանը:

**489.** Ո՞ր պետությունը 2018թ-ի հունիսին դադարեցրեց իր անդամակցությունը ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդին:

**490.** Միջազգային ո՞ր կազմակերպության մաս է կազմում Հայկական կարմիր խաչի ընկերությունը:

**491.** Ո՞ր միջազգային կազմակերպությունն է համարվում միջազգային հումանիտար իրավունքի և, մասնավորապես, Ժնևյան կոնվենցիաների «պահապանը» (guardian):

**492.** ՀՀ-ում համապետական ընտրությունների ժամանակ որ միջազգային կառույցներն են իրականացնում դիտորդական առաքելություն:

**493.** Ո՞ր արաբական երկրի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ:

**494.** Ու՞մ է պատկանում «Երկու սրբավայրերի /մզկիթների/ պահապան»

տիտղոսը:

**495.** Ո՞ր երկրում 2010թ. սկիզբ առավ Արաբական գարուն կոչվող բողոքի շարժումը:

**496.** Ո՞ր երկրում քրդերն ունեն ինքնավարություն:

**497.** Ո՞վ է եղել Եգիպտոսի պատմության մեջ առաջին վարչապետը:

**498.** Ո՞ր թվականին է հիմնադրվել Արաբական Պետությունների Լիգան:

**499.** Իսլամական համագործակցության կազմակերպություն կենտրոնակայանը որտե՞ղ է գտնվում:

**500.** Որտե՞ղ է Աֆրիկյան Միության կենտրոնակայանը:

**501.** Նշվածներից աֆրիկյան ո՞ր երկիրն ունի ամենամեծ մակերեսը:

**502.** Սոմալին ո՞ր եկրի հետ խնդիր ունեցավ 2024թ սկզբին (և ո՞րն է պատճառը):

**503.** Սառը պատերազմից հետո ո՞ր թվականին է տեղի ունեցել ՆԱՏՕ-ի առաջին ընդարձակումը (նոր երկրների անդամակցությունը):

**504.** Ինչպե՞ս է կոչվում ՆԱՏՕ-ի ստեղծման հիմնարար փաստաթուղթը:

**505.** Նշված ՆԱՏՕ-ի անդամ երկրներից ո՞րն ունի ցամաքային սահման Ռուսաստանի հետ:

**506.** Նշված երկրներից ո՞րը չի հանդիսանում ՆԱՏՕ-ի հիմնադիր պետություն:

**507.** Ո՞ր երկրում է հայկական խաղաղապահ զորախումբը մասնակցում ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությանը:

**508.** Ստորև ներկայացված տարբերակներից, որու՞մ է ճիշտ նշված ԵԱՀԿ հիմնարար փաստաթղթերը:

**509.** Ո՞րն է հանդիսանում ԵԱՀԿ-ում որոշումներ ընդունելու մեխանիզմը:

**510.** Մինչև ո՞ր թվականն է նախատեսվում Հայաստանում կառուցել ատոմակայանի նոր էներգաբլոկ:

**511.** Նշված երկներից ո՞րն է մարտական պայմաններում կիրառել կենսաբանական զենք:

**512.** Սիրիայի ո՞ր քաղաքն է եղել հակակառավարական ցույցերի կենտրոնում, որոնք պատճառ դարձան երկրում քաղաքացիական պատերազմի:

**513.** Ո՞ր միջազգային կազմակերպությունն է պատասխանատու ավիացիոն անվտանգության վերահսկման համար:

**514.** Ե՞րբ և ինչպե՞ս է առաջին անգամ ձեռք բերվել պայմանավորվածություն՝ Հայաստան-Ադրբեջան միջպետական սահմանի սահմանազատման հարցով հանձնաժողով ստեղծելու մասին:

**515.** Ո՞րն է հանդիսանում հայ-իրանական միջպետական սահմանի հատման անցակետ (Պետական սահմանի անցակետի անվանումը, նույնը՝ սահմանակից պետության կողմից):

**516.** Կառավարման ի՞նչ համակարգ ունի Վրաստանը:

**517.** Ո՞ր տարբերակն է ճշգրիտ արտացոլում Վրաստան-ԵՄ հարաբերությունների ներկա մակարդակը:

**518.** Ո՞ր երկրների հետ Վրաստանն ունի ռազմավարական գործընկերային հարաբերություններ:

**519.** Ե՞րբ է տեղի ունեցել Իրան-իրաքյան պատերազմը:

**520.** Ո՞վ է ԻԻՀ զինված ուժերի գերագույն հրամանատարը:

**521.** Մեծ Թոմբ, Փոքր Թոմբ, Աբու Մուսա կղզիների պատկանելիության շուրջ Իրանը ո՞ր երկրի հետ ունի վեճ:

**522.** Ո՞րն է Թուրքիայի պաշտոնական կրոնը:

**523.** Նշվածներից ո՞ր երկու պետությունների հետ Ադրբեջանն ունի ջրային սահման:

**524.** 2023թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ պետություններից քանիսի հետ է հաստատել դիվանագիտական հարաբերություններ:

**525.** «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը և նրա սկզբունքները ՀՀ վարչապետը առաջին անգամ որտեղ և որ միջազգային համաժողովին է ներկայացրել:

**526.** Ո՞ր երկիրը չի միացել ԱՄՆ, ԵՄ կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցներին:

**527.** Ո՞վ է ԵՄ պատժամիջոցների կիրարկման հարցերով միջազգային հատուկ բանագնաց: